

ՏԱՍՆ ԵՒ ՎԵՏԵՐՈՐԻ ՏԱՐԻ



Տարեկան գին 10 ռուբլ, կէս տարեկան 6 ռուբլ:
Առանձին համարներ 7 կոպէկով:

Թիֆլիսում գրութեան միութեան խմբագրատան մէջ:

Մեր հասցեն. Тифлисъ. Редакция «Мелъ».
կամ Tiflis. Rédaction «Mschak».

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տօն օրերէն):

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով:

Յայտարարութիւնների համար վճարում են
խաւքանչիւր բառին 2 կոպէկ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նոյա Մեծութիւնները
Բազում. Ձեր բերանով դատեցիք ձեռք. Նա-
մակ երևանաց. Ներքին լուրեր. — ԱՐՏԱՔԻՆ
ՏԵՍՈՒԹԻՒՆ. Արմաշի հրդեհը. Նամակ Թիֆլիս-
յից. Արտաքին լուրեր. — ՀԵՌԱՎԻԴՆԵՐ. — ԲՈՐՍՍԱ.
— ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ. — ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. ԱԿ-
նարկներ.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆՈՅԱ ՄԵՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԲԱԳԻՌՈՒՄ

Հոկտեմբերի 8-ին Նոյա կայսերական Մեծու-
թիւնները Թիֆլիսից հասան Բազում, ուր Նոյա
Մեծութիւնների կատարած այցելութիւնների և
չընդհատվող ժամանակների մասին հեռագիրը արդէն
մի քանի անգամ ինքնաբերական հաղորդեց մեզ: Այ-
ժմ ամառը ենթերկրում մի քանի մանրամասնու-
թիւններ Նոյա կայսերական Մեծութիւնների
Բազում անցկացրած ժամանակի վերաբերու-
թեամբ, հետեւելով պաշտօնական «Кавказ» և
«Новое Обозрение» լրագիրներին:

Ընդունելութեան համար Բազում քաղաքը մի
քանի օրից ի վեր զարգացած էր զբոսայգիներով
զօրգոյնով և ծաղիկներով: Ամսիս Յին, այն փո-
ղոցներում, որոնցով պէտք է անցնէին Նոյա
Մեծութիւնները, կանգնած էր զօրքը, առանց
հրացանների, ժողովրդից կազմած պահակա-
խումբը, ծովազերայի փողոցում կանգնած էին պե-
տական զարդերի աշակերտները և աշակերտու-
հիւնները: Երկաթուղու կայարանում խմբված էին
պետական իշխանութեան ներկայացուցիչները,
քաղաքացիները և ձայնաւորները:

Վերջապէս հասաւ արտակարգ դնացքը, և
«ուրան» թնդացրեց օդը: Գնացքը կանգնեց, Նո-
յա Մեծութիւնները դուրս եկան վազօնից, և ող-
ջունցին ներկայ եղողներին: Ներկայացնելով
քաղաքի կողմից աղ ու հաց, Բազում քաղաքա-
պետը Վեհապետ-Ջեմալին ողջունեց Նոյա Մեծու-
թիւնների գալուստը մի կարճ ճառով: Դնորհա-
կալութիւն յայտնելով քաղաքացիներին և քաղա-
քային ինքնավարութեան միւս ներկայացուցիչնե-
րին, Նոյա Մեծութիւնները առանձնացան ար-
քայական սենեակներում, որտեղ Նոյա սպասուս

էին քաղաքային տիկիւնները: Նահանգապետի ա-
մուսնը, տիկին Բոգդէ ներկայացրեց Թագուհի
կայսրուհուն տիկիւնների կողմից մի փունջ՝ ու-
կեայ փնջակալի մէջ: Կայսրանից Նոյա Մեծու-
թիւնները գնացին տաճար՝ ուր Նոյա գլխաւո-
րեց Վրաստանի էկզարխ Պապուկի մի ճառով:

Մարդկանքի վերջնաւազը յետոյ Նոյա Մեծու-
թիւնները գնացին իրանց համար պատրաստած
պալատը, որի առաջ կանգնած էին բարձր դիւնու-
րականները, քաղաքացիական և զինուորական պա-
շտօնականները, հայոց հոգևորականութիւնը, թուր-
քերի հոգևորական դասը, հիւպատոսները, և դա-
նադան պատգամաւորութիւններ: Թագաւոր կայս-
րը ողջունելով բարձրատիկան դիւնուրականներին
մօտեցաւ պատգամաւորութիւններին: Բօրսա-
յին մասնաժողովի պատգամաւորութիւնը ներկա-
յացրեց աղ ու հաց, և այդ մասնաժողովի նախա-
գահ պ. Աղամեան մի կարճ ճառ ասեց: Գրանից
յետոյ Թագաւոր կայսրը մօտեցաւ հայ և թուրք
հոգևորականութեան: Ապա Թագաւոր կայսրը
հերթով մօտեցաւ Գաղտնաւից եկած պատգամա-
ւորութեանը, որի անդամները աչքի էին ընկ-
նում իրանց աղքատի շորերով, և Անդրկասպեան
երկրի պատգամաւորութեանը, որը չլացնում էր
ամենքին իր հաղուստների ասիական գեղեցիկու-
թեամբ և զանազանակերպութեամբ: Գաղտնաւի
պատգամաւորութիւնը ներկայացրեց զանազան
ընծաներ՝ որոնց մէջ աչքի էին ընկնում Թագու-
հու կայսրուհուն ներկայացրած թանաքամանը,
չընդհատելով համար տեղացիների ձեռքով յատ-
կապէս գործած նուրբ շալը, ոսկեթել գլխոցը
(բաշլը), Թագաւոր կայսրին ներկայացրելիս սև
գոյնի տառապանք (եպիսկի), Թագուհի կայս-
րուհուն սպիտակ գոյնի տառապանք, իսկ Թագա-
ւորանի իսկնածո սուր և դաշույն:

Տէկիւնները նոյնպէս ներկայացրին զանազան
ընծաներ՝ որոնց մէջ և մի քանի գեղեցիկ գոր-
գեր:

Վերջացնելով պատգամաւորութիւնների ընդու-
նելը, Նոյա Մեծութիւնները մտան պալատը:
Կէս ժամից յետոյ Նոյա Մեծութիւնները այցե-
լութիւն արին տեղական օրիորդական դիմադի-
պին, որը չեղք զարդարված էր: Աշակերտները
երգեցին, և ներկայացրին Նոյա Մեծութիւննե-
րին իրանց ձեռքով ասեղնադրած մի գեղեցիկ
սփռոց: Այդտեղից Նոյա Մեծութիւնները գնա-

ցին ս. Նունէի օրիորդական դպրոցը, ուր Յո-
ղատան աշակերտուհի Նախուրօվայայ մի
ճառ ասեց Նոյա Մեծութիւններին առաջ: Ապա
Նոյա կայսերական Մեծութիւնները գնացին հին
ամրոցի արևմտեան կողմում գտնվող հրապարա-
կը, ուր Թագաւոր կայսրը դրեց նոր շինվող տա-
ճարի հիմքը:

Նոյն օրը երեկոցան ժամը 7-ին, պալատում
տեղի ունեցաւ ընտանեկան ճաշ: Ճաշից յետոյ
Նոյա Մեծութիւնները դիտեցին պալատի պա-
տուհանների առաջով անցնող քաղաքը, որը
նոյնպէս մտքած էր տնայնաւորութեան ցուցակի
մէջ, որպէս զի Նոյա Մեծութիւնները կարողա-
նային դադարեցնել տեղական կեանքի և
հաղորդակցութեան եղանակների մասին: Երեկո-
յան Թագուհի կայսրուհին և Նոյա Բարձրութիւն-
ները գնացին Սուրբախան «կրկնապաշտներին»
տեսնելու համար: Նոյա Մեծութիւնների գալու-
ստը առաւել, շնորհատանից կանչված էին մի
քանի կրկնապաշտներ, որոնք և այդ միջոցին
կատարեցին իրանց կրօնական արարողութիւննե-
րը: Գիշերվայ ժամը 11 1/2-ին Թագուհի կայսրուհին
վերադարձաւ քաղաք:

Հոկտեմբերի 10-ին, առաւօտեան ժամը 10-ին
Նոյա Մեծութիւնները, Թագաւորանից, Թիֆ-
լիսականների ու բարձր պաշտօնականների հետ միա-
սին գնացին զօրահանդէս կատարելու: Զօրահան-
դէսից յետոյ, Թագաւոր կայսրը յայտնեց, որ նը-
շանակում է Թագաւորանիցի Շիրվանի գնդի
չէֆ:

Ապա Նոյա Մեծութիւնները այցելեցին ծովա-
յին հիւանդանոցը, և Բարձրագոյն նախաձեռնից
յետոյ ժամը 2 1/2-ին գնացին Սև քաղաք, այցելե-
լու Նորիկ գործարարին: Զարգացած և հետաքը-
քի գործարարը և ապա նաւահանգիստը տեսնե-
լուց յետոյ, Նոյա Մեծութիւնները գնացին Բա-
լխան, անցնելով շատ գեղեցիկ կամարի տակից:
Ամենից առաջ Թագաւոր կայսրը այցելեց Դա-
տուրեանի նաւթանցքային կայարանը. ապա
կապեան-Ջերմուրեան ընկերութեան հորերում
դիտեց նաւթահանութեան գործը մանրամաս-
նաբար: Նոյա Մեծութիւնները ներկայացրին
զանազան ընծաներ և աղ ու հաց:

Երեկոցան ժամը 7-ին Օդեսաւախ Զիւրերը
դարձան Բազում, որտեղ ընթերցուց յետոյ, ժամը
8-ին գնացին երկաթուղու կայարանը, ուղեկցու-

թեամբ ժողովրդի ոգևորված «ուրայի» և այդտե-
ղից էլ ուղևորվեցան Ղարապազ:

ՁԵՐ ԲԵՐԱՆՈՎ ԴԱՏԵՑԻՔ ՁԵՁ

«Օհ, անմեղ գառ, ուրիշների պատուի պաշտ-
պան: Ուրիշ ինչ պիտի բացազանչած լինի ըն-
թերցողը, ես խօսում եմ գաւառական ընթերցո-
ղի վրա, բոլոր գոյութիւն ունեցող և դեռ ապա-
գայում լինելի բոլոր ընկերութիւնների անդամ և
նախագահ լինելու վրա երազող պ. Արգար Թով-
հաննիսեանի մասին, տեսնելով որ այդ պարտը
այնքան վրդոված պաշտպան է հանդիսանում այ-
լոց պատուի: Այս ասելով ես ենթադրում եմ, որ
ընթերցողը, հեռաւոր ընթերցողը, դժբաղդութիւն
ունէ «Արձագանք» թերթը կարողաւ բաց որով-
հետեւ այդ փոքր ինչ բնական ենթադրութիւն է,
ուստի, խնդրեմ պարզելու համար, պիտի ասել,
որ այդ դժբաղդ թերթի խմբագիրը մի առիթից
օգտվում է գրական ասպարիզում բանեցնելու մի
միջոց, որը նրա ոչ—գրական գործերի մէջ ամեն
տեսակ չարիքներից աղատող հրեշտակ է եղած
ցայժմ: Արգար Թովհաննիսեանի ճարպիկ լինելը—
մի յայտնի բան է ողջ Թիֆլիսում և, ձեռքս սըր-
տիս վրա, նրա մոտեցն անգամ՝ թէ սկզբում մի
ամսագիր և թէ յետոյ մի շաբաթաթերթ հրա-
տարակելը—մի ճարպիկութիւն է:»

Կարող էք արդեօք գուշակել, թէ պ. Արգար
Թովհաննիսեանի և նրա օրդանի հասցէին ուղղած
այդ խօսքերը ո՞վ է գրել: Գիտե՞ք, ընթերցող, թէ
այդ ում խօսքերն են:

Այդ պ. Աւետիս Արապիսեանին խօսքերն են,
որ նա գրել է «Մշակի» մէջ (տես 1886 թ. Է
«Մշակ» № 38):

Եւ այդ նոյն պ. Աւետիս Արապիսեանի այժմ
խօսում է «սկզբունքի», «իրաւունքի» և «համոզ-
մունքի» մասին, դիտե՞ք որտեղ,—«Արձագանքի»
մէջ, պ. Թովհաննիսեանի անձնական օրգանում:
Ուրախացէ՛ք, պ. Թովհաննիսեան, որովհետեւ
«զուրկ ցաւեցնելու» ոչինչ առիթ չէք ունենայ,
եթէ ձեր «սկզբունքի» հակառակորդները և
«համոզմունքի» ու սկզբունքի պաշտպանները
կը լինեն պ. Արապիսեանի նմանները...

Իր «պատկը» պաշտպանելու (?) համար Ներ-
սիսեան զարդի հոգաբարձութեան վնաս դէմ բո-

ւացել է) յիշել իր աշխատակիցներից մի քանիսի
անունները, և միւս համարներում աւելացրեց
հետեւեալ մոռացված անուններ՝ եւ «Բարխու-
դարեան, Գարոյ, Արեւեան, Չիլիսեան և այլք»:
Հետաքրքրելու այն է, որ իսկապէս «Արձագանքի»
համարները հնագիտական, և զբոսայգիական յօդ-
ւածներով լցնողները նոյն իսկ այդ «այլք» կոչ-
վող աշխատակիցներն են եղել միշտ, որոնց անուն-
ները պ. Թովհաննիսեան չէ տպել իր օրդանի ճա-
կատին, ապաղով համարելով «բեկլամի» համար,
թէ և դրանց յօդուածներով էր նա միայն լցնում
իր օրդանի վերջ համարները և ներկայացնում իր
ընթերցողներին...

Նախկին «Փորձի» հրատարակչի խմբագրական
գործունեութեան մէջ միշտ գոյութիւն ունեցող
անհետկողականութիւնը երևան է գալիս և այս
հանգամանքում: Մենք աւելի յարգանքով կը վե-
րաբերվէինք դէպի «Արձագանքի» հրատարակչի
գործունեութիւնը՝ եթէ նա մի անգամ ընդ միշտ
վնասէր իր օրդանի էջերը բաց անել միայն «պա-
պօրտաւոր» գործերի առաջ, և թոյլ չը տար,
որ գէթ իր օրդանի միջոցով հանդէս գային ոչ-
դիպլոմատ մարդիկ: Գոնէ այն ժամանակ կա-
սէինք, որ պարտը «արտաքին դիպլոմ» ո-
չինչ արժանաւոր բան չէ գտնում: Բայց, տարա-
բաղդաբար, պարտի համար ամեն բան լաւ է,
եթէ իր «ես»-ին և իրան է ծառայում, և դիպ-
լոմն էլ կորցնում է իր նշանակութիւնը, այն
դէպքում, երբ հարցը վերաբերում է «Արձագան-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԱԿՆԱՐԿՆԵՐ

O tempora, o mores

«Արձագանքի» հրատարակիչը չէ կարողանում
«մարտի», որ «Մշակի» «պապօրտ» չունեցող
աշխատակիցները ձայն են բարձրացնում այս
կամ այն հարցի վերաբերութեամբ: Մեր օպօր-
տիւնիստ շաբաթաթերթի բոլոր պապօրտաւոր
դրոշմները խել խելի տալով ուրիշ ոչինչ չեն
կարողանում ասել, բայց եթէ՛ «ո՞վ է «Մշակի»
այս ինչ աշխատակիցը», կամ՝ «ինչ մարդ է
«Մշակի» այս ինչ յօդուածի գրողը»:

Առանձին «Մշակի» աշխատակիցներից մի
քանիսին տ հ ա ս և թ ե ռ ու ս, պ. Թովհաննիսեան
պարծնում է այն անուններով, որոնք մի քանի
տարի է տպագրվում են «Արձագանքի» առաջին
երեսի վրա, և որոնք համարվում են,—գէթ ա-
նունով,—այդ շաբաթաթերթի աշխատակիցներ:

Պ. Թովհաննիսեան, որ իր օրդանը իսկապէս
իր անձի համար է հիմնել, հրճում է որ կարո-
ղացել է ձեռք բերել հայոց զբաղակութեան մէջ
յայտնի մի քանի անձինքների համաձայնութիւնը

և նրանց անունը տպագրում է, իբրեւ իր աշխա-
տակիցներ:

Բայց «Արձագանքի» հրատարակիչը, որը իր
հասարակական գործունեութեան մէջ շատ ան-
գամ աշող ցանցեր է հիւսել,—այս բանում, մեր
կարծիքով, շատ սխալվել է...

Եթէ պ. Թովհաննիսեանի օրդանը ունենար մի
նախադեմ ճանապարհ, որոշ պրօգրամ, նա ին-
քը պէտք է խոյս տար իր շաբաթաթերթի ճա-
կատին այնպիսի անուններ տպագրելուց, որոնց
միմեանց մօտ չարեւն իսկ գրական ուղղութեան
տեսակետից տարօրինակ է թվում...

Վարդը է արդէն, որ կարդում ենք «Արձա-
գանքի» ճակատին հետեւալը. «միջ կաշխատակ-
ցին հետեւեալ անձինք. պ. պ. Բէհլուքեան, Բէգ-
նադարեան, Բարայեան, Երեցեան, Զելինսկի,
Խալաթեան, օր. Մատինեան, Շիրվանզադէ, Ռ-
Պատկանեան, Պառլեան, Սուրուկեան, փ. Վար-
դանեան, Վաղինակ, Ն. Տէր-Վանդեան, Գ. Տէր-
բանեան, Բաքի, Բաքի, Բաքի, Բաքի, Բաքի, Բաքի,
Գ. Բարխուդարեան, Գարոյ, Ն. Արեւեան, Զի-
լիսեան, Գարաբեան և այլն»:

Ուշադիր ընթերցողը տեսնում է, որ այդ ցու-
ցակի մէջ մտքած են ամեն տեսակ անուններ,
թէ զբաղակութեան մէջ յայտնի և թէ անյայտ:
Բայց ո՞վ որ մի փոքր ծանօթ է մեր գրականու-
թեան և մամուլի հետ, նա անկասկած կը ժողտայ
տեսնելով այդ անունները միմեանց մօտ չարած:
Ասում ենք կը ժողտայ, որովհետեւ դժուար է
համոզվել, որ դա աշխատակիցների մի խումբ չէ,

զորոգ պ. Արախանան, այժմ իր «պատիւը» «Արձագանքի» էջերումն է որոնում, անց «Արձագանքի», որի ընթերցողներին անգամ նա «ընթերցողը է համարում... Եթէ «Արձագանքի» կարգադրել է ժողովուրդին է նրա էջերում հիւրընկալվել և գովաբանվել... Այսպէս որքան անելի անպատուութիւն է «հարպիկ խմբագրի» (ինչպէս պ. Արախանանն է ասում) պրօօտ եկցի ալի տակ մտնել...:

Մենք կատարելապէս համաձայն ենք, պ. Արախանան, ձեզ հետ, որ «Արձագանքի» հրատարակելը պ. Գովհաննիսեանի կողմից մի ճարպիկութիւն է, որովհետեւ այդ ճարպիկութեան շնորհիւ է նա ձեռք նմաններին հարկաւոր ժամանակը իր ցանցը է գցում, հարկաւոր ժամանակը գովաբանում, իսկ հարկաւոր չեղած ժամանակը՝ հայոցում, հալածում...:

Կեցցե՛ք ամենքդ էլ միմեանց լաւ էք գտել... Եւ այսպիսիները թող են տալիս իրանց խօսելու «սկզբունքի», «համոզմունքի» և «պատիւի» մասին...:

ՆԱՄԱԿ ԵՐԵՒԱՆԻՑ

Հոկտեմբերի 5-ին

Սովորաբար ամեն տարի, երբ սկսվում է սեպտեմբեր ամիսը, Երևանը մի քանի ամիս շարունակ մեռելային անշարժութեան դատապարտված լինելուց յետոյ, սկսում է միանգամից կենդանանալ, հոգի առնել, մի խօսքով մի նոր կեանք ընդունել: Բացի այն որ վերադառնում են ամառանոց դնացողները, բացվում են ուսումնաբանական, հրապարակ են բերվում միջերեսները, նոր նոր սկսվում է առևտուրը, մի և նոյն ժամանակ ըսկալում է այգեկութիւնը, քաղվում են աշնանային բոլոր պտուղները, գլխաւորապէս խաղողը, որը կաղնում է Երևանի արդիւնաբերութեան գլխաւոր ձևը: Սկսած սեպտեմբերի 15-ից մինչև հոկտեմբերի 15-ը եռանգուն կերպով սկսում է ամեն ոք իր այգին քաղել, խաղողը ժողովել, ու մանր իրանք են խաղողը արորում և գինի պատրաստում, ոմանք էլ վաճառում են յայտնի գինեգործներին, իսկ մի մասը, գլխաւորապէս թուրքերը, պահում են՝ փոքր առ փոքր հրապարակ բերելու և վաճառելու համար: Տենց այս վերջինների շնորհիւ է, որ մինչև աշնան վերջերը, Երևանում կարելի է գտնել ամենալաւ և ամենանոր խաղող, այն էլ էժան գինով:

Այս տարի Երևանի երկու յայտնի գինեգործներից (թէ է կա մի երրորդն էլ, բայց սա պատրաստում է գլխաւորապէս օդի), միայն մէկն է խաղող առնում, իսկ միւսը բոլորովին հրաժարվել է խաղող գնելուց, բաւականանալով միմիային իր այգիների արտադրած խաղողով, չը նայած որ անցեալ տարի մօտ երկու հարիւր խաղվարի խաղող գնեց: Այս վերջինը, այն է պ. Կ. Ա. Ֆրիկեան, ինքը անձամբ գինեգործութիւնը

Գերմանիայում ուսումնասիրած լինելով, պատրաստում է ամենաբարձր գինի, որը ամենայն տարի Օդեսայում կարողանում է աղողութեամբ վաճառել: Բայց թէ այս տարի ինչու է պատրաստում անցեալ տարիների պէս մեծ քանակութեամբ գինի, պատճառն այն է թէ այս տարի խաղողը շատ թանկ է և որ այս գինեղով խաղող գնելը գինի պատրաստելու համար ձեռնառու է: Անցեալ տարի խաղողի խաղվարը 18 ռուբլուց ավելի է վաճառվեց, այն ինչ այս տարի երեսուց ռուբլով վաճառվում է ամենահեշտ կերպով, մինչդեռ խաղողի այսպիսի գինը շատ օտակա է պատահում: Ժողովուրդը ասում է. ինչու պիտի խաղողը այս գինեղով վաճառվի, մինչդեռ փողի բացակայութիւնը միշտնում քանի դնում է աւելի է դժգոյս դառնում, բայց պէտք է իմացած, որ այսպիսի գէպերը ունեն իրանց ակներև պատճառները: Այս տարի գարնան գինու գինը միանգամից բարձրացաւ մինչև երեսուց ռուբլի կարասը և այդպէս էլ շարունակվեց, բացի այդ այս տարվայ վատ եղանակները, յորդաւատ անձրևները, և դանաղան հիւանդութիւններն այն աստիճան լիւծաներ հասցրին խաղողին, որ սպասածի կէսը հազիւ ստացվեց: Ուրեմն գարնանային է խաղողի խաղվարը երեսուց ռուբլի տեսնել, երբ առաջ բերելը մի պատճառ ևս հայի յատուկ սովորութիւնից, այն է գինի պատրաստողներ և խաղող գնողներ նկատելի կերպով շատացել են, ինչպէս ասում են սուսկի պէս մէկը միւսի քամակից բուսել են: Այս տարիներում, շատ տեղացիներ աչք տալով այս յայտնի գինեգործներին իրանք էլ են սկսել գինի պատրաստել Ռուսաստան արտահանելու նպատակով, որոնցից շատ քիչերին է աջողվել այդ, չը կարողանալով մինչև գարնան պարզ և մաքուր պահել գինիները: Մասնաւոր մարդիկ չեն կարող լաւ գինի պատրաստել, քանի որ պատրաստելու ձևը չը գիտեն. և եթէ պատրաստում են, այն էլ նահապետական, փտած, հին սխառնայով, և պատրաստած գինիները մի քանի ամսվայ վրա սղողորում են և փչանում, ուր մեաց այսպիսի տարիներում, երբ խաղողը ինքն ըստ ինքան փչացած է: Թող այդ հատ ու կտոր գինեգործները իմացած լինեն, որ իրանց անտեղեկ գործին ձեռք պահելով և անպիտան գինիները արտահանելով օտար անգղեր, վնասում են թէ իրանց, թէ յատուկ այդ գործին նուիրվողներին և թէ վայր են գցում ընդհանրապէս Երևանի ընտիր գինու վարկը:

Յ. Տ. Մ.

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Հոկտեմբերի 10-ին վեհափառ Կաթողիկոսը այցելեց ՌԻՖԻԼԻՆԻ Ներսիսեան թեմական դպրոցը, այնուհետև Գայանեան, Անանեան և Ս. Նշան եկեղեցու օրորդուց դպրոցները: Վեհափառ ընդունելութիւնը Ներսիսեան դպրոցում փառաւոր էր: Նա չըջաղապէս ամբողջ շինութիւնը, նայեց դաստանները, ննջարանը, հիւանդանոցը: Գալորցի

դահլճում Կաթողիկոսին դիմաւորեցին՝ հոգաբարձութիւնը, տեսուչը, վարժապետները և աշակերտները: Խօսակցան ճառեր, որոնց քանի մի խօսքերով պատասխանեց Կաթողիկոսը, ապա աշակերտները երգեր երգեցին:

Տեղական ուսուցիչները հաղորդում են, որ այս օրերս ՌԻՖԻԼԻՆ հասաւ մեր քաղաքին լաւ ծանօթ շնորհալի երգչուհի Երկին Ալիս Բարբի, որը դիտաւորութիւն ունի քանի մի կոնցերտներ տալ ՌԻՖԻԼԻՆում, մասնակցութեամբ զերմանացի յայտնի պիանիստ, պ. Ֆելդաուեր:

Այս օրերս մտաւ մեր խմբագրատուն մի երեւանցի, պ. Նշան Նշանեան, և ցոյց տուց մեզ մի փայտեայ ոսկեղոծ երկար բաղէտ, որի վրա երևում էին տարօրինակ նկարներ: Պարոնը պատմեց մեզ հետեւեալ և իր խօսքերը հաստատելու համար ցոյց տուց մեզ մինչև անգամ պօլիցիական վկայականը: Գոհիս ամսին 1886 թվին, նրա կաղմարաբական արհեստանոցին Նրանում, խից կայծակը. այդ ժամանակ անհետկի մի անկիւնում դրված էր յիշեալ ոսկեղոծ փայտեայ բաղէտը, և ահա այդ բաղէտի վրայով կայծակն անցնելով, կատարելապէս փոխեց նրա գոյնը, գոյացնելով նրա մակերևութի վրա այլ և այլ մոխրագոյն-արծաթափայլ տարօրինակ նկարներ: Մենք խորհուրդ տուցինք պարոնին ցոյց տալ այդ հաղապիտ երևոյթը ուսումնական մարդկանց:

Երկաթուղիների վազմնակում թուղթ խաղալը, ինչպէս լսել է «Petersburger Herald» լրագիրը, վերջնականապէս արգելված է հաղորդակցութեան ճանապարհների միջնատրոսթեան կողմից: Այդ կարգադրութիւնը խախտող ճանապարհորդները կենթարկվին օրինական պատասխանատուութեան:

Հոկտեմբերի 20-ին, ուսուց դրամատիկական խումբը ներկայացրեց լսնիկ թատրոնում իշխան Սուբատովի թիֆլիսցիներին արդէն յայտնի «Мужь Знаменитости» պիեսան: Ընդհանրապէս ստեղծ խաղը լաւ անցաւ, և գլխաւոր խաղաւորները, ինչպէս Գանիւլովա, Լիւդմիլովա և Ֆորկատի իրանց գերեզման էին: Բայց տարաբաղդաբար, պ. Ֆորկատիի ներկայացումները այս տարի մինչև այժմ միանգամայն անաջող են զընում: Գրամական կողմից, թատրոնի դահլճը ընդհանրապէս դատարկ է լինում, և եթէ այդպէս շարունակվի, ի հարկէ այդ թատրոնը գոյութիւն ունենալ չէ կարող: Ինչով բացատրել հասարակութեան այդ չը տեսնված անտարբերութիւնը, քանի որ թէ Ֆորկատիի այս տարվայ խաղերը ավելի լաւ է անցեալ տարիներից և թէ այդպէս պիեսաներ, ինչպէս «Мужь Знаменитости» պիեսը է գէթ միջակ արդիւնք տալին: Խումբը պատրաստում է ներկայացնելու մօտ ժամանակներում «Համէտ»:

Ինչու, ձեռք ենք հարցնում: Ուրեմն ինչ անուս տանք ձեռք այդ տեսակ վարմունքին: Բայց այդ անուսը մեզ չենք թող ինքն ընթերցողը դատէ և ձեռք յատկացնէ ձեռք արժանաւոր անուսը...:

«Արձագանքի» հրատարակելը, ինչպէս վերին էլ ասեցինք, տպագրելով իր օրդանի առաջին երեսի վրա մի շարք իրը—աշխատակիցների առնչում են, իսկապէս իր հաշիւների մէջ շատ յիշատակ է, և ահա թէ ինչու: Մենք մի քանի անգամ չենք կատարել, որ Բաֆֆիի աշխատակցութիւնը ձեռք գցելով, պ. Գովհաննիսեան մեծ յոյս է ունեցել իր օրդանի աշխատեան վրա, բայց բանը հենց նրանում է, որ նա իր սպասած հետեւներն չը հասաւ, քանի որ Բաֆֆի իսկապէս չաշխատակցեց «Արձագանքին» այլ միայն իր ողջով վաճառեց այդ շարքավերթիւն իր մի երկու վեպերը, ուրիշ Բաֆֆին, Կայծակերի», «Երկին» ու «Ջալալէդդին» հեղինակը չէր կարող համակրել «Արձագանքին», և այդ պատ-

Հոկտեմբերի 12-ին նշանակված էր ՌԻՖԻԼԻՆԻ նահանգական դատարանում Դատաւար Գրիգորի զեղատան կապալաու պ. Բէժանովի «Մշակի» խմբագրի դէմ գանգատի դործը, մեր լրագրում անցեալ տարվայ № 105-ի մէջ յիշեալ զեղատան մասին տպված լուրի պատճառով: Գատարանում նախագահում էր պ. Ժովովսկի, անդամներ էին իշխ. Բէժանով և պ. Գանիւլով: Գործը պաշտպանում էր երկուեայ հաւատարմատար պ. Սենեքերիմ Արծրունի: Նախագահը առաջարկեց կողմերին հաշտվել: «Մշակի» խմբագիրը յայտնեց, որ անձնապէս պ. Բէժանովի դէմ ոչինչ չուենալով, երբեք մտքում չէ ունեցել նախամտածած կերպով վիրաւորել նրան, մասնաւորապէս որ ինքն իր ինքնապատկով, չը սպասելով պ. Բէժանովի կողմից որ և է հերքման, տպեց նոյն տարվայ «Մշակի» № 109-ի մէջ մի նկատողութիւն, որի մէջ ցաւակցութիւն էր յայտնում տպած լուրի մասին: Նոյն ցաւակցութիւնը կրկնեց նա և դատարանի առջև: Մեղադրողը յայտնեց իր գոհունակութիւնը, որից յետոյ նախագահը դիմեց նրան ասելով, որ շատ լաւ է անում, որ հաշտվում է, որովհետեւ խմբագիրներին շատ անգամ մոլորեցնում են թղթակիցները, իսկ եթէ խմբագիրները պէտք է սպասէին մինչև որ ստացած լուրը ստուգվի կամ ձգվի, շատ ժամանակ կանցներ և լուրը կը կորցնէր իր թարմութիւնը, իր ժամանակակից հետաքրքրութիւնը: Ապա նախագահը յայտնեց գործի դատաւարութիւնը դադարեցած:

ՔՈՒՐԱՅԻՍԻՑ մեզ գրում են, որ այնտեղ մեծ պատրաստութիւններ են տեսնված Նոյա Կայսերական Մեծութիւններին ընդունելու համար:

Մեզ գրում են ՂՈՒՐԱՅԻՑ, որ սեպտեմբեր ամսի վերջերում այդ քաղաքում ծխականները ընտրեցին նոր երեցիփոխին, այն է պ. Հայրապետ Փռանդուկեանցին: Նախկին երեցիփոխ, պ. Յարութիւն Ստեփանեանց, որը իր գործունէութեամբ մեծ օգուտ էր տուել եկեղեցուն, մօտ եօթ տարի ծառայելուց յետոյ, այլ ևս ծառայել չը կամենալով, հրաժարվեց իր պաշտօնից:

Մայրաքաղաքի լրագիրները հաղորդում են, որ Կաթողիկոսի լատիներէից շատերը, չունենալով ոչինչ դրամագումար, չիմանալով ոչ մի լեզու, բացի լատիներէից, վճռել են դադարել իրանց հայրենիքից դէպի Ամերիկա:

«Тражедия» լրագիրը հաղորդում է, որ ներքին գործերի միջնատրոսթիւնը բանակցութիւն է սկսել Ֆինանսների միջնատրոսթեան հետ, որպէս զի վերջինը մի որոշ գումար բաց թողնէ ՌԻՖԻԼԻՆում խեղադարձների համար մի յատուկ ապաստան հիմնելու:

Այս օրերս ներքին գործերի միջնատրոսթի օգնական, սենատոր Պլիլէ, հաստատեց ուսուց դրա-

քին»: Փաստեր էք ուզում: Ահա ձեռք փաստեր: «Արձագանքին» դուր չէ գալիս որ պ. Գրիգոր Արծրունին ասպարէզ է տալիս «պատպօր» չունեցող և նոր գրողներին Մենք չենք էլ խօսում այն մասին, որ «Մշակը» միշտ այդպէս է վարվել, չը խաղաղելով համալսարանական դիպլոմներով: Բայց արդեօք մեղադրելով «Մշակին» այդ բանի մէջ, ինքնիրդ կատարել էք ձեռք ասածը:—Ո՛չ: Դեռ անցեալ տարի, երբ դուք, պ. Գովհաննիսեան, մի քանի ամսով արտասահման գնացիք, ինչպէս ինքնիրդ յայտնեցիք, ձեռք հրատարակած «Armenische Bibliothek»-ի գործերը կարգադրելու համար:—«Արձագանքի» խմբագրութիւնը միանգամայն յանձնեցիք ձեռք աշխատակից և «Արձագանքի» արդարող պ. Մովսէսեանին (Ներսիսեանց): Պարոնը մօտ երեք ամիս խմբագրեց «Արձագանքը» պաշտօնապէս Պաշտօնապէս ենք ասում, որովհետեւ ձեռք ՌԻՖԻԼԻՆում եղած ժամանակն էլ, ինչպէս հաստատ ասում են, նա է կաղնում գլխաւորապէս «Արձագանքի» համարները: Այն ժամանակ նոյն իսկ հասարակութեան մէջ ահագին տրտունջ բարձրացաւ. «Եթէ ոչինչ ուսում չունեցող երէկվայ գործակաւորարդ պէտք է խմբագիր լինի և զեկալվարի հասարակութիւնը, ասում էին շատերը: Իսկ ՌԻՖԻԼԻՆում հրատարակվող մի թիւրք,—այն ժամանակ բանակաւ սկսելով «Արձագանքը» խմբագրող պ. Ներսիսեանցին հետ, 1500 ռուբլի Ձեռքներ կորած փողերի առիթով, աւելի էլ փքելով հասարակութեան զանազան շրջաններում

արտապայտիղ այդ կարծիքը, սկսեց ամեն օր կըրկնել, թէ մի օր և է գործակաւոր, որը նոյն իսկ միջնատրոսթի դպրոցի երես էլ չէ տեսել, համարձակվում է խմբագիր հանդիսանալ և այն և այլ լինի:

Կաշկանդված ուղեղների յայտնած այդ մտքերին «Մշակը» կօպէկի նշանակութիւն չը տուց. և մենք «Արձագանքի» այն ժամանակվայ համարները ձեռք առնելով մի վարկեան անգամ չէինք մտածում այն մասին, թէ արդեօք խմբագրի տեղը ստորագրեց է գիպում ունեցող, բանիկի դերեկտոր և «դիրք» ունեցող պ. Արգար Գովհաննիսեան, թէ գործակաւորարդ պաշտօնը նոր թողած և ոչ մի օր ուսում չառած որ. Շիրվանդադէ: Մեզ միայն հետաքրքրում էր շարքավերթիւնը բողմանդակութիւնը, և չենք կարող, ձեռք խղճի վրա դրած, չը խոստովանել, որ այն երեք ամիսների ընթացքում, «Արձագանքը» դոնէ անկողմնապահութիւն էլ է արտապայտեց բարձրացնելով 1500 ռուբլու հարցը:—մի հարց: որ ինքը պ. Գովհաննիսեան անմիջապէս դատարանից, երբ արտասահմանից վերադարձաւ:

Վերադառնալով և կրկին ստանձնելով իր օրդանի անուանական խմբագրի պաշտօնը, պ. Գովհաննիսեան հրապարակով, «Արձագանքի» էջերում շնորհակալութիւն յայտնեց պ. Ներսիսեանցին, յայտնելով որ նա պարտքից օգնական մեծ տաղանդ ցոյց տուց:

Արդ, ձեռք ենք հարցնում, պ. Գովհաննիսեան,

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԲՈՐՍԱ

Հոկտեմբերի 11-ին

Լոնդոնի վրա 10 ֆունտ տրվեց . . .	93	50
Համբուրգի վրա 100 մարկ . . .	45	80
Փարիզի վրա 100 ֆրանկ . . .	36	75
Ոսկի . . .	7	55
Մաքսային կուպոններ . . .	151	—
Արծաթ . . .	1	15
Բորսային գիծաններ . . .	7	80
Պետական 5% տոմս 1-ին շրջանի . . .	98	12
— 2-րդ . . .	97	75
— 3-րդ . . .	97	25
— 4-րդ . . .	97	37
— 5-րդ . . .	97	38
— 6-րդ . . .	—	—
Նոր 4% փոխառություն . . .	82	12
Արևելյան 5% փոխառություն 1-ին շրջ. . .	96	—
— 2-րդ . . .	95	87
— 3-րդ . . .	95	87
Ներքին 5% առաջին փոխառություն . . .	261	50
— երկրորդ . . .	237	—
51/2% ընտան . . .	102	—
Ոսկեայ ընտան . . .	170	50
Եվրոպայի կոնսոլիդացիոն փոխառու- թիւն . . .	144	—
Նոր երկաթուղային ընտան . . .	95	62
5% գրավական թղթեր կալուած . . .	—	—
փոխ. կրեդ. ընկ. մեծ . . .	148	—

Գրավ. թղ. Ալիս. բանկի . . .	91	37
51/2% գրավական թղթեր Խերսոնի . . .	96	37
Կալուած բանկի . . .	97	—
6% գրավական թղ. Խարկովի կալ. բան. . .	100	50
— Պոլտավայի . . .	99	—
— Պետ. Տոկան . . .	99	—
— Կիևի . . .	100	—
— Մոսկվայի . . .	100	—
— Բեսարաբ. Տոկ. . .	99	—
— Նիժ. Սամար. . .	100	—
— Վիլնայի . . .	99	—
— Թիֆլիսի—21 և 43 տ. . .	—	—
— Բուխարայի—18 և 43 տ. . .	—	—
Վոլոդկո-կամսկի բանկի ակցիաները 640 . . .	—	—
Ռուսաց երկաթուղիների գլխավ. ընկ. 229 . . .	—	—
Ռիբինսկ-Բոլոգոյի ընկ. . .	81	—
Ս. Պետերբուրգի քաղաքային օրվ- գացիաներ . . .	91	50
Մոսկվայի քաղաք. օրվ. գացիաներ . . .	92	12
Օդեսայի . . .	92	50
Թիֆլիսի քաղաք. կրեդ. ընկ. օրվ. . .	—	—
Ս. Պետերբուրգի բորսայի տրանսպորտային հանդարտ է:	—	—

Խմբագիր-հրատարակող Գ.Ի.Գ.ՈՐՈՒՆԻ

В А В С Д Е Ж З И Й К Л М Н О П Р С Т У Ф Ц Ч Ш Щ Ъ Ы Ь Э Ю Я

ГАЗЕТА А. ГАТЦУКА

ИЛЛЮСТРИРОВАННАЯ ПОЛИТИКО-ЛИТЕРАТУРНАЯ.

Будет выходить усиленными номерами с 1-го октября, хотя срок приостановки ея истек 8-го июня. Подписчикам 1887 года «Газета» будет высылаться бесплатно до 1-го января; подписавшимся же на 1888 год доставка «Газеты» начнется с 1-го октября по рас-
считу: на год—с октября 1888 года по октябрь 1889 г., а на полгода—с 1-го октября 1888 г. по апрель 1889 г. Добавочная плата до 1890 года вносится по расчёту 1 р. 30 к.
Подписная цѣна на 3 мѣсяца (с октября по январь 1889) г. 1 р. 60 к., на весь 1889
годъ (отъ 1-го января 1889 до января 1890 г.)—безъ перес. 4 р., съ пересылкою же 5 руб.
Коптора редакціи въ Москвѣ, Никитскій бульваръ, д. Гатцука.

COMPAGNIE DES MESSAGERIES MARITIMES

PAQUEBOTS-POSTE FRANÇAIS.

ՖԻԱՆՍԻԱԿԱՆ ՆԱԽԱԳԱՅՈՒԹԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

(ՄԵՍԱԺԵՐԻ ՄԱՐԻՏԻՄ)

Կանոնաւոր և ուղղակի երթևեկութիւն ՄԱՐՍԵԼԻ և ԲԱԹՈՒՄԻ միջև և փոխադարձ
Ուրբաթ, 14 (26) հոկտեմբերի, ԲԱԹՈՒՄԻՑ դուրս կը գնայ շոգինաւ CAMBOGE
(ԿԱՄԲՈՋ) նաւապետ PAUL (ՊՈԼ) մանկով Կ. Պօլիս, Զմիւռնիա և Սիւրա:
Աղէնաները՝ ԲԱԹՈՒՄԻՄ պ. Գ. ԷՍՍԵՆՃԻՐԻ, իսկ ԹԻՖԼԻՍԻՄ ԳԵՈՐԳ ԶԵՋՈՒԲԵԱՆ:
ՀԵՋՈՒԲԵԱՆ:

ՀԱՅՈՑ ԴՐԱՄԱՏԻԱԿԱՆ ԱԿՈՒՄԲԻ

Վարչութիւնը պատիւ ունի խնարհաբար խնդրելու պ.պ. անդամներին շնորհ բերել
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻՆ, որը կը լինի ներկայ հոկտեմբերի 23-ին, առաւօտեան 12
Ժամին, Նազորնայա փողոցի վրա, պ. Եսայի ֆիլոսոֆիանի տանը:

Լ Ո Յ Ս Տ Ե Ս Ա Ր

ԱԲԻՍՏՈՂՈՄ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆՅԻ ՌՈՒՍԵՐԻՆԻՑ-ՀԱՅԵՐԻՆ ԲԱՌԳԻՐԳ ԱՌԱՋԻՆ ՀԱՏՈՐ

Դինն է 3 ըուրլի, ճանապարհի ծախսը գնողի վրա է:

Միանուագ քսանից աւելի գնողին գիշումն կը լինի:

Վաճառվում է ԲԱՅԱՌԱՊԷՍ Խիլիկէի և ընկ. զբաղմունքներով, Թիֆ-
լիս, Գոլովինսկի Պրոսպեկտ, առաջին Գրիմազիայի հանգէպ:

7—40

ЗУБНЫЯ СРЕДСТВА А. ШТЕХЕРЪ
ПОДОЛЬСКІЯ ЗУБНЫЯ КАПЛИ
КОРОБКА 50 И 80 К.
ГИГИЕНИЧЕСКІЙ КОКАИНОВЫЙ
ЗУБНОЙ ЭЛИКСИРЪ
БОЛЪШ. ФЛАКОНЪ 80 К.
ГИГИЕНИЧЕСКІЙ ЗУБН. ПОРОШОКЪ
КОРОБКА 30 К.
Складъ во всѣхъ аптекахъ и аптеч. магаз.

ՊՐՈՎԻԶՈՐ Ա. ՇՏԵԻՆԻՐԻ ՄԻՋՈՑՆԵՐԸ
ԱՏԱՄՆԵՐԻ ՅԱՌԻ ԵՒ ՓՁԱՆԱԼՈՒ ԴԷՄ

ՊՕԴՈՒՆԱՆ ԱՏԱՄՆԱԴԵՂ ԿԱԹԻՆԵՐ 80 ԿՈՊ.
ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԿՈԿԱԻՆՆԵԱՆ ԱՏԱՄՆԱՅԻՆ ԷԼԻԿ-
ՍԻՐ 80 ԿՈՊ.

ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԱՏԱՄՆԱՅԻՆ ՓՈՇԵՒ 30 ԿՈՊ.

ԳԼԽԱՒՈՐ ՊԱՀԵՍՏ. ԹԻՖԼԻՍԻՄ՝ Կովկասեան զեղափառաւան, և պ. պ.
Շահարոնեանցի, Մակկերի, Սէնիկովսկու և Ազմուրովի զեղաւաններով. ԲԱԳՈՒԻ մէջ,
Բէկէլերի մօտ, ԲՈՒԹԱՅԻՍՈՒՄ՝ Կոկոզիլի մօտ, ՍՏԱՎՐՈՊՈԼԻՄ Բրօնիցովու մօտ և ԵԿԱ-
ՏԵՐԻՆՆՈՒՐՈՒՄ:

(Հ.)

ԿԵՕԼԷՐԵԱՆ ՔԱՅԱԼԻ ԷՍՍԷՆՅԻՆ

Յայտնի է, որ բարձր և լաւ յատկութիւնն է պատճառ ներկայումս
ԿԵՕԼԷՐԻ ՔԱՅԱԼԻՆ ԷՍՍԷՆՅԻՆՆԵՐ քաղաքական տարածման, և այդ պատճառով հասկա-
ման, այսինքն
ԿԵՕԼԷՐԻ ՔԱՅԱԼԻՆ ԷՍՍԷՆՅԻՆՆԵՐ հասարակութեանը չառաջարկելին զաւանդներով
քաջախի անպիտան կեղծումները, որոնցով մինչև այժմ ևս պարագայում են մի քանի պարոն-
ներ: Լաւ
ԿԵՕԼԷՐԻ ՔԱՅԱԼԻՆ ԷՍՍԷՆՅԻՆՆԵՐ պէտք է ի նկատի ունենան, որ յայտնի
լաւ արտադրութիւնների ամեն տեսակ կեղծումները և նրանց նմանեցնելը բոլորովին ու-
րիշ նպատակներ ունեն, որոնք ոչինչ ընդհանուր չունեն գնորդների շահերի հետ: և այդ
պատճառով այդ առարկան գնելու ժամանակ նրանց միայն կարելի է խորհուրդ տալ

ԶԳՈՅՇ ԼԻՆԵԼ

Որքան կարող եմ դատել, որիչներին հետ համեմատելով, իմ
ԿԵՕԼԷՐԻ ՔԱՅԱԼԻՆ ԷՍՍԷՆՅԻՆՆԵՐ մինչև այժմ համարվում է ամենալաւ, ամենաձեռ-
նուն և ամենահամեղը—և յայտնում, որ օր ան օր յետոյ կը մնայ նոյնը:
Մարմնով է գաւառներում բոլոր աւելի նշանաւոր առևտրականների մօտ, Մոսկվա-
յում—Բ. Կէլերի և Ընկ. մօտ, Նիկոլայա փողոցի վրա:

№ 1. Ս. Ե. Օ. (3—3)

ԿԵՕԼԷՐԵԱՆ ԴԱԼՄԱՏԵԱՆ ԵՐԻՑՈՒԿ

Ուրիշ դրա նման միջոցների հետ համեմատելով, ամենազօրեղ միջոցն է միջաներից,
որպէս են լուսաները, ուտիւնները և այլն
Մարմնով է գաւառներում բոլոր նշանաւոր առևտրականների մօտ. Մոսկվայում—
Կ. Ե. Կէլերի և Ընկ. մօտ, Նիկոլայա փողոցի վրա:

№ 1 Ս. Ե. Օ. (3—3)

НѢМЕЦКАЯ ГОСТИНИЦА

ВЪ ВАРШАВѢ

31. Другая улица 31.

ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՀԻՒՐԱՆՈՑ

ՎԱՐՇԱՎԱՅՈՒՄ, Դուրա փողոց, 31. Գտնվում է քաղաքի նոյն
Իսկ ԱՌԵՏԻՍԱԿԱՆ կենտրոնում, ԹԱՏՐՈՆԵՐԻ և բոլոր ՊԱՇՏՈՆԱՏԵՂԵՐԻ կողքին:
90 սենյակներ, շքեղ կերպով յարմարեցրած, 30 կոպէկից մինչև 3 ըուրլի օ-
րական վարձով:

ԿՕՆԴԻՏԵՐԻԱ և ԲԷՍՏՈՐԱՆ

Ճաշեր 30 կոպէկից մինչև 1 ըուրլի:
ՕՍԵՐԻՈՒՍՆԵՐ և ԿԱՌՔԵՐ երկաթուղու բոլոր գնացքների համար:
ԿԱՌՔԵՐԻ վարձը չափաւոր գներով:

(2)

ԲԻԼԻԱՐԴԻ ԳՆՏԵՐ

Մեծ ընտրութեամբ, կիլներ և նրանց համար կաշի ծախվում են ճախարակազոր՝ վար-
պետ Վ. Գօլովիկովու մօտ, Օդեսայում, Կրասնի պէրէուլ, տուն Եփաքի (Одесса,
красный переул. д. Шварца, токарн. мастеръ В. Говликовский).

10—10 (2)

ВЫСОЧАЙШЕ УТВЕРЖДЕННОЕ Российское Общество Застрахованія капиталовъ и доходовъ УТВЕРЖД. ВЪ 1835 ГОДУ

ԲԱՐՁՐԱԳՈՅ ՀԱՍՏԱՎԱՅ
Իրուաց ընկերութիւն կապիտալների և եկամուտների ապահովութեան
հիմնված 1835 թվին

Ամենայն և միակ ուսաց ընկերութիւն, որը բացառապէս պարագայում է կենքի (կապիտալների
և եկամուտների) ապահովութեան գործով, փոխադարձութեան սկզբունքներով վրա:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐԱՄԱԳԼՈՒԻ 8,000,000 ՐՈՒԲԼԻ

1. Կապիտալների ապահովութիւնը ԺԱՌԱՆԳՈՒԹԱՆ համար, ապահովացնողի մահուան դէպքում
համար:
2. Կապիտալների ապահովութիւնը ՆԵՐՈՒԹԻՒՆԸ և երկրանների համար ԲԱԺԻՐԸ ապահովացնելու
համար:
3. Եկամուտների և ցմահ նշանակվող ԹՈՇԱԿՆԵՐԻ ապահովութիւնը:
Տարիները և մահամահան տեղեկութիւնները ուղարկվում են անվարձ ԳԼԽԱՒՈՐ ԳՈՐԾԱԿԱ-
ԼՈՒԹԵԱՆ կողմից, որը գտնվում է Թիֆլիսում, Վելիամինովսկայա փողոց, տուն № 24.
Գլխաւոր Աղէնու և Տնտէժ Կովկասեան երկրի համար՝ Ն. Ն. ԳՐՈՒԶԻՆԵՐԻ:

—ՊԱՀԱՆՋՎՈՒՄ ԵՆ ԱԳԷՆՏՆԵՐ ԵՒ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐ—
Թիֆլիսի և Կովկասեան ուրիշ քաղաքների համար:

23—32 (2)

ԻԳԻԻԻ հայոց եկեղ. դպրոցների զբաղմունքի վարչութիւնը գիմնով յարգոյ հե-
ղինակներին, Թարգմանիչներին և բանասէրներին, խնդրում է նրանց ուղարկել զբա-
ղմունքի իրանց նոր աշխատութիւններից մի մի օրինակ, որով շատ նպաստած կը լի-
նեն զբաղմունքի միջոցներից դուրի զբաղմունքին, Հասցէն. Իգդըր, Բիբլիոթեա Արմ.
ՍԽՈԼԵ.

2—3

Յանկանալով հրատարակել հանգուցեալ ինժներ Պետրոս Պետրոսեանի կազմած
և անոթի միայն «ՀԱՅԵՐԻՆԻՑ ՌՈՒՍԵՐԻՆ» ԲԱՌԱՐԱՆԸ, որի ապագրութիւնը ահա-
գին ծախք է պահանջում, գիմնում եմ գլխաւորապէս հանգուցեալի ընկերներին,
ինքնիքով որ օգնեն ինձ այդ կարեւոր ձեռնարկը բաժանորդագրութեամբ լցոյ
ընծայելու բաժանորդագիրը մինչև լցոյ ընծայելը կը լինի՝ 4 ը. իսկ լցոյ տեսնելուց
յետոյ 6 ըուրլի: Բաժանորդ գրելի կարելի է Թիֆլիսում՝ «Կենսաբանական» և «Միջա-
կեան» զբաղմունքների մէջ և ինձ մօտ: Օտարաբաղադրացիները պէտք է գիմն-
հետեւալ հասցէով. Թիֆլիս. Արթիմիո Սեդուկովսկի պէտք է գիմն-
8. Պետրոսեան

3—3